ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱ-ՁԱՅՆԱԳՐՈՒՄ /ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐ-ՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 1/ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐ-ՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒ-ԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 27 հունվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվա-կանի հոկտեմբերի 12-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիա-կան զարգացման բանկի միջեւ վարկային համաձայնագրում /Հատուկ գործո-ղություններ /Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրա-գիր-Ծրագիր 1/ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապե-

փության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին ուղղված՝ Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 08.12.2009թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Համաձայնագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) միջեւ եւ ՀՀ էկոնոմիկայի նախարարի կողմից այն ստորագրվել է 2009թ. հոկտեմբերի 12-ին:

Համաձայնագիրը կնքվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ 2009թ. սեպտեմբերի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ շրջանակային ֆինանսավորման համաձայնագիրը:

Համաձայնագրի հիմնական նպատակն է նպաստել Հայաստանի ենթատարածաշրջանային եւ պետական տրանսպորտային ճանապարհային ցանցի զարգացմանը, բարելավել ճանապարհային ենթակառուցվածքը, ճանապարհային ցանցի կառավարման կարողությունները եւ Ծրագրում ընդգրկված ճանապարհների անվտանգությունը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է, որ կմեծանա առեւտրաշրջանառությունը, կնվազեն բեռնափոխադրումների ծախսերը, կբարելավվեն կառավարման հնարավորությունները, կաճի տարանցիկ երթեւեկությունը եւ այլն:

2. Համաձայնագիրը բաղկացած է 6 հոդվածներից եւ վերջինիս անբաժանելի մասը կազմող թվով 5 հավելվածներից, ընդ որում՝ 3-րդ հավելվածն իր հերթին բովանդակում է աղյուսակ, այն է՝ վարկային միջոցների հատկացումներ եւ տրամադրումներ, համաձայն որի՝ համաձայնագրի ընդհանուր արժեքը կազմում է 38.443.000 փոխարկման հատուկ իրավունքին (ՓՀԻ) համարժեք գումար՝ տարբեր արտարժույթներով: Հիշյալ գումարն Ասիական զարգացման բանկի կողմից վճարվելու է իր Հատուկ ֆոնդի ռեսուրսների հաշվին:

Համաձայնագրով սահմանվում են վարկային միջոցների տրամադրման եւ օգտագործման կարգը, վարկին եւ դրա մարման կարգին ու ժամկետներին վերաբերող պայմանները, վարկառուի հատուկ պարտավորությունները, համաձայնագրի գործողության ժամկետը, ինչպես նաեւ այլ դրույթներ:

Համաձայնագրի 1-ին հոդվածն արձանագրում է, որ վարկը հատկացվելու է ԱԶԲ-ի Հատուկ գործառնությունների վարկի տրամադրման կարգին համապատասխան: Նշված հոդվածում պարզաբանվում են համաձայնագրի տեքստում օգտագործված մի շարք եզրույթների նշանակությունը եւ իմաստը:

Համաձայնագրի 1-ին հավելվածից բխում է, որ Ծրագրի հիմնական բաղադրիչներից են Երեւան-Աշտարակ չորսշերտանի ճանապարհի 18.4 կմ հատվածի վերակառուցումը եւ Երեւան-Արարատ ճանապարհի (38 կմ) անվտանգության բարձրացումը:

Նշված ներդրումային Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2013թ. օգոստոսի 31-ին:

Համաձայնագրի 2-րդ հավելվածին (Ամորտիզացիոն վճարների գրաֆիկ) համապատասխան վարկառուն մայր գումարի մարումը կատարելու է ԱՄՆ դոլարով՝ 2018թ. մարտի 15-ից մինչեւ 2041թ. սեպտեմբերի 15-ը՝ ըստ սահմանված գրաֆիկի եւ մասնաբաժինների:

Վարկառուն՝ Հայաստանի Հանրապետությունը, պարտավորվում է ԱԶԲ-ին վճարել տարեկան 1% տոկոսադրույքով վարկային վճար վարկի մարման արտոնյալ ժամանակահատվածում՝ վարկային հաշվից մասնահանված եւ վճարման ենթակա վարկաբաժնի դիմաց, իսկ այնուհետեւ վճարել տարեկան 1.5% տոկոս: Ընդսմին, նշված տոկոսները եւ ցանկացած այլ վճարներ պետք է վճարվեն կիսամյակը մեկ անգամ՝ ամեն տարվա մարտի 15-ին եւ սեպտեմբերի 15-ին: Հարկ է արձանագրել, որ նշված վարկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրվում է արտոնյալ ժամկետով (մինչեւ 2018թ.), որից հետո վարկառուն պարտավորվում է մայր գումարի մարումը կատարել մինչեւ 2041թ. սեպտեմբերի 15-ը:

Վարկառուն համաձայնում է ապահովել, որ վարկային միջոցներն ուղղվեն բացառապես Ծրագրով նախատեսված ծախսերի ֆինանսավորմանը (համաձայնագրի 3-րդ հոդված):

Վարկի եզրափակման ժամկետ է սահմանվում 2014թ. հունիսի 30-ը կամ Հայաստանի Հանրապետության եւ ԱԶԲ-ի միջեւ փոխհամաձայնեցված այլ ժամկետ:

Համաձայնագրով նախատեսված է, որ ապրանքների, աշխատանքների եւ խորհրդատվական ծառայությունների գնումներն իրականացվելու են վարկատուի՝ ԱԶԲ-ի, Գնումների ուղեցույցին համապատասխան:

Ըստ համաձայնագրի 4-րդ հոդվածի՝ վարկառուն ստանձնում է մի շարք հատուկ պարտավորություններ, որոնք շարադրված են համաձայնագրի 5-րդ հավելվածում: Մասնավորապես, վարկառուն պարտավորվում է ծրագրի շրջանակներում վերակառուցվելիք ճանապարհների պահպանության համար պետական բյուջեում նախատեսել անհրաժեշտ փաստացի տարեկան ծախսեր: Բացի դրանից, Հայաստանի Հանրապետությունն իր սեփական միջոցների հաշվին կատարելու է ոչ կամավոր վերաբնակեցման ընթացքում առաջացած այն ծախսերի ֆինանսավորումը, որոնք կգերազանցեն բյուջետային նախահաշվարկը:

Համաձայնագիրը եւ վերջինիս 5-րդ հավելվածն ամրագրում են նաեւ վարկառուի պարտավորությունները՝ կապված շինարարության որակին ներկայացվող չափանիշներին, հանրային կառավարմանը եւ կոռուպցիայի դեմ պայքարին, ճանապարհների անվտանգությանը եւ բնապահպանական խնդիրներին:

Շինարարության նկատմամբ վերահսկողությունը, որակի հսկողությունը եւ պայմանագրերի կառավարումն իրականացվելու են միջազգային ընդունելի չափանիշների համաձայն:

Վարկառուն երաշխավորում է, որ Ծրագրի շրջանակներում ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր պայմանագրերը կնախատեսեն դրույթներ, ըստ որոնց՝ ԱԶԲ-ին իրավունք է վերապահվում աուդիտի ենթարկել եւ ստուգել Ծրագրի իրականացման գրասենյակի գրառումներն ու հաշիվները եւ բոլոր կապալառուներին, մատակարարներին, խորհրդատուներին եւ Ծրագրի հետ կապված բոլոր այլ ծառայություններ մատուցողներին:

Համաձայնագրով ՀՀ պարտավորությունների կատարման համար պատասխանատվությունը կրելու է Ծրագրի կառավարման խորհուրդը, որի համանախագահներն են ՀՀ էկոնոմիկայի ու տրանսպորտի եւ կապի նախարարները:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնելու Հայկական կողմից անհրաժեշտ համապատասխան ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին ԱԶԲ-ին ծանուցելու օրվանից:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկանքի՝ համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է որոշակի ֆինանսական պարտավորու-

թյուններ, որոնք նախատեսված են համաձայնագրի 2-րդ հոդվածում, 2-րդ հավելվածում, 5-րդ հավելվածի 9-րդ, 10-րդ եւ 15-րդ կետերում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2009 թվականի հոկտեմբերի 12-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ վարկային համաձայնագրում /Հատուկ գործողություններ /Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր- Ծրագիր 1/ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը :

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

27 հունվարի 2010 թվականի
ՍԴՈ-861